

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒՈՒԹՅՈՒՆ

Համիկ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ

ՍՈՒՆՆԻՍՏԱԿԱՆ ԳԾԵՐԸ ՎԻՐՋԻՆԻԱ ՎՈՒԼՖԻ ՎԵՊԵՐԻ ՊՈԵՏԻԿԱՅՈՒՄ

Հողվածում ուսումնասիրվում են անգլիացի գրող Վ. Վուլֆի մոդերնիստական վեպերի առանձնահատկությունները: Հիմնական շեշտը դրվում է «Ձեկոքի սենյակը» և «Դեպի փարոսը» վեպերի վրա, որոնցից յուրաքանչյուրը հեղինակի ստեղծագործության առանձին փուլն է: Սակայն գաղափարական առումով այդ ստեղծագործություններում պահպանվել են ընդհանուր օրինաչափությունները, որոնք հնարավորություն են տալիս վերլուծական հայացքով հետևել դրանց պոետիկայի զարգացման դինամիկային: Վ. Վուլֆի վեպերի պոետիկան վերլուծելիս անխուսափելի է անդրադարձը «գիտակցականի հոսքին», որը կենտրոնական տեղ է գրավում մոդերնիզմի շրջանի գրականության մեջ: Այդ ուղղության տարրերը ակնհայտ են նաև հետազոտվող վեպերում՝ պատճառահետևանքային կապի բացակայությունը, սյուժետային գծի մասնատումը, ժամանակի և տարածության սահմանների ողողումը:

Գրողի նպատակն է համեմատել մասնակի ընդհանրականի հետ, ակնթարթը հավերժության, լեզվական պայմանականությունների հաղթահարում, քանի որ հենց դա կարող է մոտեցնել կեցության հիմունքների ճանաչելությանը:

Բանալի բառեր. Վ. Վուլֆ, կառուցվածքային պոետիկա, մոդելավորում, տեքստային տարրերի կազմավորում, գիտակցական հոսք, փորձարարական մոդերնիստական վեպ

Գեղարվեստական արձակի փայլուն վարպետ, անգլիական մոդերնիստական գրականության ականավոր ներկայացուցիչ Վիրջինիա Վուլֆը ուրույն դեմք է եվրոպական գրականության մեջ: Սակայն նման անվիճելի կարգավիճակը չամրագրվեց անմիջապես. գրականագետներից և գրաքննադատներից պահանջվեցին երկար տարիներ, որպեսզի ըստ արժանվույն գնահատվի Վ. Վուլֆի ստեղծագործությունը 20-րդ դարի գրականության համատեքստում:

1945 թվականին լույս է տեսնում Դ. Գեյչեսի «Վիրջինիա Վուլֆ» /Daiches, 1967/ մենագրությունը, ուր առաջին անգամ խոսվում է Վուլֆի՝ որպես լուրջ փորձարարական ստեղծագործությունների հեղինակի մասին: Հաջորդ տարի անգլերեն թարգմանվում է գերմանացի հետազոտող Է. Աուերբախի ուսում-

նասիրությունը, որը վերնագրված էր «Միմեսիս: Իրականության պատկերումը արևմտաեվրոպական գրականության մեջ» /Auerbach, 1953/: Աուերբախը հաստատում է գրողի կարևոր դերը 20-րդ դարի գրականության զարգացման գործում: Մինչ այս ուսումնասիրությունը Վուլֆի անունը չէր դասվում գեղարվեստական արձակի վարպետների թվում, իսկ հետազոտությունը լույս տեսնելուց հետո գրողի անունը միշտ ընդգծվում էր այն խոշորագույն արձակագիրների թվում, ովքեր առավելագույն դեր ունեցան դարաշրջանի գրական գործընթացում: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ 1940-ական թվականներին մոդեռնիստական գրականությունը դեռ հեռու էր վերջնական ճանաչումից:

1962թ. լույս է տեսնում ֆրանսիացի հետազոտող Ժ. Գ-վիգեյի «Վիրջինիա Վուլֆը և նրա ստեղծագործությունը» գիրքը, ուր գիտնականը, համոզիչ կերպով հաստատելով վիպասանուհու հսկայական դերը մոդեռնիստական գրականության զարգացման գործում, այն միտքն է արտահայտում, որ գրաքննադատների մեծ մասը հետազոտում է ոչ այնքան գրողի ստեղծագործության գրականագիտական կողմը, որքան «այն մետաֆիզիկան, որը մշտապես կմնա անձնական դավանանքի և ճաշակի հարց» /Guiguet, 1965: 89/:

Հատկանշական է, որ Վ. Վուլֆի մեծագույն դերը մոդեռնիստական գրականության զարգացման գործում վերջնականապես հաստատվեց ոչ թե անգլիացի, այլ ֆրանսիացի հետազոտողի կողմից: Դիշտ է, գիրքը շուտով թարգմանվեց անգլերեն և մեծ ճանաչում գտավ ոչ միայն անգլալեզու, այլև եվրոպական գրական շրջաններում:

1960-70-ականներին մեծացավ հետաքրքրությունը՝ Վուլֆի ընտանիքի անդամների կողմից 20-րդ դարասկզբին ստեղծած և մինչև 1930-ականների կեսերը գործած Բլումսբերյան գրական-գեղագիտական ակումբի փիլիսոփայական-գեղագիտական հայացքների հանդեպ, դա անգամ դարձավ նորաձևություն: Սակայն նման մեծածավալ հետաքրքրությունն ուներ ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Մի կողմից նման հետաքրքրությունը, անշուշտ, խթանում էր ավելի խոր անդրադարձը Վ. Վուլֆի արձակին ինչպես ընթերցողների, այնպես էլ քննադատների կողմից, սակայն մյուս կողմից՝ Բլումսբերյան խմբի տեսական ժառանգությունը ստվերի մեջ էր թողնում գրողի բուն գրական նվաճումները: Ուշադրության կենտրոնում ավելի հաճախ հայտնվում էին Վ. Վուլֆի գեղագիտական հայացքները, նրա հարաբերությունները խմբի տարբեր անդամների հետ և ոչ թե նրա գրական ստեղծագործությունները: Անգլիացի հայտնի կին քննադատ Հ. Լին արդարացիորեն նշում է. «Այն, ինչ իրականում նորաձև ու հետաքրքիր է դարձնում Բլումսբերյան, բնավ չի բացատրում այն, ինչը Վ. Վուլֆին դարձնում է հռչակավոր վիպասան» /Lee, 1977: 3/:

Հետաքրքրությունը Բլումսբերյանի հանդեպ կանխորոշեց 1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին քննադատության մեջ Վ. Վուլֆի ֆեմինիստական կերպարի հայտնվելը: Բլումսբերյան խմբի այն դրույթները, որոնք ուղղված էին վիկտորիանական դարաշրջանի երեսպաշտական հնացած

նորմերի դեմ, հաճախ մեկնաբանվում էին և ընկալվում որպես ֆեմինիզմի բացահայտ դրսևորում:

1970-ականներին քննադատության մեջ ստեղծվեց ֆեմինիստական գրականությունը հետազոտող մի ճյուղ, որի ներկայացուցիչներն էին Ջ. Նարենդորը, Ն. Մ. Բեյզին, Ա. Վան Բյուրեն Բեյլին: Վ. Վուլֆի ստեղծագործությունների ուսումնասիրությունն ու մեկնաբանումը ֆեմինիստական դիտանկյունից էլ ավելի լայն տարածում է գտնում 1970-80-ականներին: Այդ ժամանակաշրջանում լույս տեսած աշխատանքներից աչքի են ընկնում ամերիկացի Ջ. Մարկուսի ուսումնասիրությունները /Marcus, 1988/, ուր ֆեմինիստական դիտանկյունը գրողի վեպերում ներկայացվում է որպես առաջնային: Սակայն, ինչպես ցույց է տալիս Վուլֆի վեպերի համապարփակ քննությունը, նման միակողմանի մոտեցումը նրա ստեղծագործության հանդեպ չի կարող լինել արդյունավետ:

Բացի դրանից, սրա հետ կապված, անհրաժեշտ է նշել նաև գրականագետ Ռ. Սամուելսոնի այն դիտողությունը, որ Վ. Վուլֆի ստեղծագործությունների մեջ անհրաժեշտ է տարբերել ֆեմինիզմը (feminism) կանացիությունից (femininity) /Samuelson, 1960: 59/:

Նման մոտեցումը, ինչպես ցույց տվեցին դրան հաջորդած ուսումնասիրությունները, տալիս է շատ հետաքրքիր արդյունքներ, քանի որ Վիրջինիա Վուլֆի համար կանացի և տղամարդկային գիտակցությունների հարաբերության հարցը կենտրոնականներից մեկն է: Բուն մոդեռնիստական նախադասությունը իր «ճկունությամբ և հոսունությամբ» Վ. Վուլֆը բնորոշում է որպես «իզական սեռի մշտական էություն և հիմք» /Woolf, 1989: 73/:

Սակայն, ինչպես արդեն նշվեց, հետազոտական այդ մոտեցմամբ սահմանափակվելը Վ. Վուլֆի ստեղծագործության ուսումնասիրության գործում արդյունավետ չէ:

Վուլֆի ստեղծագործության ուսումնասիրությունը ֆեմինիզմի դիտանկյունից շատ հաճախ կապված է նույն այդ գործերը ֆրեյդիստական դիտանկյունից հետազոտելու փորձերի հետ: Որպես օրինակ կարելի է բերել է. Աբելի «Վ. Վուլֆ. ստեղծագործություն և հոգեվերլուծություն» (1989) գիրքը, ուր հեղինակը ոչ միայն ընդգծում է Ֆրոյդի տեսության արտացոլումը գրողի վեպերում, այլև վերլուծում Բյուսթերի խմբի փիլիսոփայական-գեղագիտական հայացքների կապը հոգեվերլուծության հետ /Abel, 1989: 92/:

Հետազոտողների հետաքրքրությունը Վիրջինիա Վուլֆի ստեղծագործությունների հոգեբանության վերլուծության հանդեպ էլ ավելի է մեծանում 20-րդ դարի 90-ականներին: Այս առումով հատկանշական են հոգեբանական դպրոցի ներկայացուցիչ Լ.Օ. Ջինի /Jean L. O., 1970/ «Խենթության ու արվեստի աղբյուրները» և «Գիտակցության աշխարհներ. միֆապոետական մտածողությունը Վ. Վուլֆի վեպերում» ուսումնասիրությունները, ուր հեղինակը շատ հետաքրքիր կերպով է կապում գրողի հոգեբանական հայեցակետը նրա ստեղծագործական գործընթացի հետ:

Մեր ժամանակներում հետաքրքրությունը Վ. Վուլֆի ստեղծագործության հանդեպ չի նվազում, սակայն նորագույն ուսումնասիրությունների զգալի մասը

հիմնականում կենտրոնանում է Վ. Վուլֆի ստեղծագործության գեղերային կամ լեզվաոճական կողմի վրա:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ դեռ ամբողջապես ուսումնասիրված չեն Վ. Վուլֆի վեպերի պոետիկայի այն հարցերը, որոնք անմիջականորեն կապված են մոդեռնիզմի դրսևորումների հետ:

Այս հոդվածում փորձ է արված քննելու Վ. Վուլֆի «Ջեկոբի սենյակը» և «Գեյի փարոսը» վեպերը, որոնցից յուրաքանչյուրը մի առանձին փուլ է ներկայացնում գրողի ամբողջ ստեղծագործության մեջ: Եվ չնայած դրան՝ գրողի ստեղծագործության գաղափարական շղթայի և ստեղծագործական ոճի առումով այս վեպերի միջև պահպանվում են որոշ ընդհանուր օրինաչափություններ: Մենք փորձել ենք վերլուծել այս վեպերի պոետիկան՝ որպես մեկ ընդհանուր համակարգ՝ իր զարգացման դինամիկայի մեջ: Սա օգնում է նաև բացահայտելու Վ. Վուլֆի վեպերի գեղարվեստական կառուցվածքի յուրահատկությունը և միևնույն ժամանակ նշմարելու հեղինակի վեպերի պոետիկայի զարգացման ուղեգիծը:

Կառուցվածքային պոետիկայի նպատակն է, ըստ Յու. Լոտմանի, ցույց տալ, թե ինչպես է գեղարվեստական տեքստը դառնում որոշակի գաղափարի կրող, և թե ինչպես է տեքստի կառուցվածքը հարաբերակցվում այդ գաղափարի հետ: Լոտմանը գրում է. «Գաղափարը որևէ, թեկուզ շատ հաջող ընտրված մեջբերումների մեջ չէ, այլ արտահայտվում է ամբողջ գեղարվեստական կառուցվածքի մեջ: Գաղափարը արվեստում միշտ մոդել է, քանի որ այն վերստեղծում է իրականության պատկերը: Հետևաբար գեղարվեստական գաղափարը կառուցվածքից դուրս անհնարին է: Գեղարվեստական տեքստը բարդ կառուցված իմաստ է, և նրա բոլոր տարրերը իմաստային են» /Лотман, 1998: 24/:

Կառուցվածքային պոետիկայի մեթոդոլոգիական հիմք է ծառայում գեղարվեստական տեքստի ներունակ (իմանենտ) ուսումնասիրությունը, որն ուղղված է ստեղծագործության՝ որպես մեկ ամբողջականի, տեքստային տարրերի կազմավորման եղանակների բացահայտմանը: Այս մոտեցումը շատ արդյունավետ է Վ. Վուլֆի վեպերի վերլուծության պարագայում: Մի կողմից այն թույլ է տալիս ընկալելու այն գաղափարները, որոնք կիրառել է հեղինակը՝ համաձայն աշխարհի մոդելավորման իր համակարգի: Կառուցվածքային վերլուծության սկզբունքներին անդրադառնալը թելադրվում է նաև Վ. Վուլֆի վեպերի առանձնահատկությամբ. ակնհայտ է, որ դրանք «կառուցված են, մոնտաժված»: Գեղարվեստական կառուցվածքի բոլոր տարրերը հեղինակի կողմից ընկալվում էին որպես իմաստաժին: Օրագրային գրառումները վկայում են այն մասին, որ մինչ իր փորձարարական վեպերի վրա աշխատանք սկսելը Վ. Վուլֆը հստակ պատկերացնում էր իր ապագա ստեղծագործությունների արխիտեկտոնիկան (ճարտարակերտությունը):

Խնդրո առարկա երկու վեպերի տեքստերի իմաստաբանական վերլուծության համար անհրաժեշտ է վերլուծել այս վեպերը «շերտավոր» (սեզմենտային) եղանակով: Կարևոր դեր է այստեղ խաղում իմաստային համարժեք կամ կրկնվող մտքերի ու գաղափարների վերլուծությունը: Սա

հնարավորություն է տալիս ի հայտ բերել տեքստի իմաստաբանական «կմախքը»: Վ. Վուլֆի գեղարվեստական աշխարհի յուրահատկությունը բացահայտելու համար շատ կարևոր է նաև հասկանալ, թե ինչու հեղինակը իմպրեսիոնիստական պատմվածքի ժանրից կտրուկ շրջադարձ կատարեց դեպի վեպը: Հատկանշական է այն, որ շատ կերպարներ և մոտիվներ, որոնք ունիվերսալ են հեղինակային պոետիկայի համար, ի հայտ են գալիս արդեն նրա վաղ իմպրեսիոնիստական պատմվածքներում: Սակայն եթե պատմվածքներում դրանք կատարում են ոչ շատ էական, պահի իմպրեսիոնիստական դետալի գործառույթ, ապա վիպական կառուցվածքում դրանք վերաճում են բավական բարդ և առանցքային խորհրդանիշերի: «Ջեկորի սենյակը» և «Դեպի փարոս» վեպերում իմպրեսիոնիստական հոսունությանը և քառսին հակադրված է տիեզերքի ունիվերսալ ու կայուն մոդելը:

Արդեն իր առաջին՝ «Ճանապարհորդություն դեպի դուրս» վեպից պարզ է դառնում, որ հեղինակի պոետիկայի զարգացումն ուղղված է դեպի նոր գեղարվեստական ձևերի որոնումը, որոնք համարժեքորեն կարտացոլեն այդ ներքին տիեզերական միասնությունը: Մ. Բախտինը նշում է, որ «վեպի ժանրն իր բնույթով շատ ճկուն է, մշտապես որոնող, ինքն իրեն մշտապես հետագոտող և իր բոլոր արդեն կայացած ձևերը վերանայող» /Бахтин, 2000: 231/:

Վ. Վուլֆի վեպերի կառուցվածքում տեղի է ունենում հենց տեքստի մշտական կայացումը. մարդկային գիտակցության միկրոտիեզերքը, ընդլայնվելով և ծավալվելով, վերաճում է մակրոտիեզերքի: Նույնը տեղի է ունենում տեքստի հետ. մշտապես գտնվելով կայացման գործընթացում - այն վերաճում է միկրոտեքստից մինչև մակրոտեքստ:

Վ. Վուլֆի վեպերի պոետիկական վերլուծելիս անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ «գիտակցության հոսք» հասկացությանը, որը կենտրոնական տեղ է զբաղեցնում մոդեռնիստական գրականության մեջ: Հայտնի է, որ «գիտակցության հոսքի» գրական ուղղությանը բնորոշ է իրադարձությունների մատուցման շարադրական ձևից հրաժարվելը, պատճառահետևանքային կապերի, ինչպես նաև ժամանակատարածային շղթայակցման թուլացումը: Հիմնական շեշտն այստեղ դրվում է տպավորությունների, հուշերի, հոգեկան տվյալանքների անվերջ շղթայի պատկերման վրա՝ այն ամենի, ինչ տեղի է ունենում մարդկային սուբյեկտիվ գիտակցության մեջ: Այս ամենն առկա է նաև Վ. Վուլֆի վեպերում, ուր «գիտակցության հոսքը» հանդես է գալիս ոչ թե պարզապես որպես գրական հնարք, շարադրանքի նոր տեխնիկա, այլ որպես բովանդակություն, ստեղծագործության բուն էություն:

Վ. Վուլֆի ստեղծագործություններին բնորոշ «գիտակցության հոսքը» ուսումնասիրելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն որոշակի պատմամշակութային միջավայրը և ժամանակաշրջանը, երբ տեղի են ունենում գրական նոր ձևերի հեղինակային որոնումները: Այս առումով պետք է հաշվի առնել այն ազդեցությունը, որ ունեցան Ջ. Ջոյսի և Մ. Պրուստի ստեղծագործությունները Վ. Վուլֆի՝ որպես մոդեռնիստական գրողի կայացման

գործում: Անհրաժեշտ է նաև հետևել այն զուգահեռներին, որոնք առկա են մի կողմից Վ. Վուլֆի ստեղծագործություններում տեղ գտած «գիտակցության հոսքի» և մյուս կողմից՝ Ու. Ջեյմսի և Ա. Բերգսոնի առաջադրած գաղափարների միջև:

«Գիտակցության հոսքի» դրսևորման յուրատիպությունը «Ջեկոբի սենյակը» և «Դեպի փարոս» վեպերում ներկայացնելու համար կարևոր է վերլուծել գործող անձանց «ներքին մենախոսությունների» հոգեբանական կողմը: Իսկ դրա համար իր հերթին անհրաժեշտ է առաջին հերթին հստակեցնել այն դիտանկյունները, որոնցից տարվում է շարադրանքը, և հետո ցույց տալ այդ «ներքին մենախոսությունների» և «ուրիշի», «արտաքին» խոսքի միահյուսման դեպքում առաջացած բազմաձայնությունը, «պոլիֆոնիան» (Մ. Բախտինի տերմինը):

Միևնույն ժամանակ պետք է չմոռանալ, որ «մոդեռնիզմ» հասկացությունն ունի ինչպես նեղ, այնպես էլ լայն իմաստ: Լայն առումով այն մեկնաբանվում է որպես այդ դարաշրջանին բնորոշ առանձնահատուկ աշխարհընկալում: Այս կարգավիճակում մոդեռնիզմին առավել բնորոշ է «հեղափոխականությունը», այն ձգտում է վերացնել խոսքի մշակութային պայմանականությունը և հարաբերականությունը: Ճշմարտացիության առաջնային գրավականներն են դառնում «անգիտակցականը»՝ ֆրոյդիզմում, «ստեղծագործական մղումը»՝ Ա. Բերգսոնի «գիտակցության հոսքը»՝ Ու. Ջեյմսի և Ջ. Ջոյսի համար: Հենց այդ լայն իմաստով է մոդեռնիզմը հոգեհարազատ Վ. Վուլֆին, որի համար դա միակ ուղին է ճշմարիտին, էականին հասնելու համար: «Ժամանակակից գրականությունը» հողվածում Վ. Վուլֆը կոչ է անում իր ժամանակակից վիպասաններին «մի կողմ նետել պայմանականությունների մեծ մասը», «ավելի մոտենալ կյանքին» և բացահայտել «այն նվիրական կրակի առկայծումը, որն իր բռնկումները հաղորդում է մեզ՝ ուղեղի միջոցով» /Woolf, 1989: 279/:

Հենց այդ մոդեռնիստական որոնումն ու «մաքուր իրականության» հաստատումն է մարմնավորում հեղինակը «Ջեկոբի սենյակը» և «Դեպի փարոսը» վեպերում:

Ավելի նեղ իմաստով մոդեռնիզմը սովորաբար դիտարկվում է որպես 20-րդ դարի արվեստի և գրականության որոշ հոսանքների ոճական պրակտիկա: Գրական ստեղծագործությունների դեպքում դա արտահայտվում է նրանում, որ ոճին տրվում է ավելի մեծ նախապատվություն, քան սյուժեին, մեկ այլ դեպքում տեքստը ներկայացվում է տեքստի մեջ, կամ հեղինակը ակտիվ երկխոսություն է վարում ընթերցողի հետ, և վերջինս ասես դառնում է տեքստի համահեղինակ: Սակայն վերը նշված միջոցները քիչ են հանդիպում Վ. Վուլֆի վեպերում, իսկ առկայության դեպքում էլ դրանք իրենց մեջ չեն կրում գաղափարական և իմաստային կարևոր լիցք:

«Ջեկոբի սենյակը» Վ. Վուլֆի առաջին փորձարարական վեպն է: Մինչ այդ ստեղծված պատմվածքները և երկու վեպերը գրվել էին ավանդական ձևով: Փորձարարական մոդեռնիստական վեպի տեխնիկան, որը համահունչ էր հեղինակի փիլիսոփայական-գեղագիտական հայացքներին, ըստ Վուլֆի, առավել համարժեք էր ներկայացնում մարդուն և նրա տեղը տիեզերքում:

Փորձարարական վեպի առավելությունն ակնհայտ է ոչ միայն նրանում, որ այստեղ Վուլֆը կարողացել է հմտորեն պատկերել անվերջ հոսքը այն մանր «մասնիկների», որոնք «գրոհում» են մարդկային գիտակցությունը և այդ եղանակով ձևավորում կյանքի ընդհանուր ուրվանկարը: Շատ ավելի կարևոր է այն փաստը, որ «Ջեկոբի սենյակում» վեպում հեղինակին հաջողվել է միաձուլել մեկ կուռ միասնության մեջ մարդկային գիտակցության «հոսքը» և կեցության ունիվերսալ ընթացքը, մարդկային կյանքը և հավերժությունը: Հեղինակային պոետիկայի գլխավոր հնարքներից մեկը կրկնությունն է բառային, կառուցվածքային և սյուժետային մակարդակներում: Դրա միջոցով է հեղինակը ապահովում իմաստի մշտական «աճը»: Վ. Վուլֆի վեպերի շարադրական հյուսվածքում առաջանում են շատ բարդ իմաստային հարաբերություններ հիմնական կերպարների և մոտիվների միջև: Կրկնության տարբեր եղանակների միջոցով կերպարների և մոտիվների իմաստային դաշտը շարունակ լայնանում է՝ ձգտելով անվերջության, իսկ այդ կերպարներն ու մոտիվները դառնում են մարդկային կեցության ունիվերսալ խորհրդանիշներ: Ստեղծագործության տեքստը մշտապես վերադառնում է նրան, ինչին հեղինակն արդեն հասել էր, և ինչին ընթերցողն արդեն ծանոթ է: Ստեղծվում է շրջապտույտի տպավորություն:

«Գիտակցական հոսքի» մոդելավորումը Վ. Վուլֆի այս երկու վերպերում միտում ունի «դուրս պրծնել» անհատականի և սուբյեկտիվի սահմաններից ու միաձուլվել տիեզերական հոսքին: Դրան է նպաստում շարադրանքի «դիտանկյունի» մշտական փոփոխումը, երբ դժվար է տարբերել հեղինակային ձայնը հերոսի ձայնից: Այս երկու վեպերի բազմաձայնությունը՝ «պոլիֆոնիզմը», ներկայանում է որպես տիեզերքի բազմաձայն միասնություն, ուր միատեղվում են տարբեր ձայներ և գիտակցություններ:

Վ. Վուլֆի մոդեռնիստական պոետիկայի առանձնահատկությունների շարքում աչքի է ընկնում նաև շարադրական հյուսվածքի մասնատվածությունը, տեքստի կառուցման մոնտաժային սկզբունքը և պատճառահետևանքային ու ժամանակատարածային կապերի անորոշությունը, իսկ երբեմն էլ՝ լրիվ բացակայությունը: Գեղարվեստական բոլոր այս սկզբունքներն իրականացվում են «Ջեկոբի սենյակը» վեպում և հետո իրենց զարգացումը ստանում «Դեպի փարոսը» ստեղծագործության մեջ, որն իրավամբ համարվում է Վ. Վուլֆի ստեղծագործության գագաթնակետը:

«Դեպի փարոսը» վեպի կառուցվածքային հիմքում ընկած է եռակիության սկզբունքը: Ստեղծագործության երեք գլուխներում նկարագրվում են հերոսների կյանքի երեք տարբեր շրջաններ (նախապատերազմական, պատերազմական և հետպատերազմական): Այդ եռակիության միասնականությունը՝ որպես տիեզերքի մոդել, վեպում կրում է խոր խորհրդանշական իմաստ: Այս վեպում խորհրդանշական իմաստ են ստանում այնպիսի կերպարներ, որոնք ունիվերսալ են Վ. Վուլֆի պոետիկայի համար (տներ, փարոսներ, պատուհաններ...): Նույնը վերաբերում է նաև մոտիվներին (կյանքի և մահվան), որոնք առկա էին դեռ գրողի ավանդական վեպերում՝ «Ճանապարհորդություն դեպի դուրս», «Գիշեր ու ցերեկ»:

«Ջեկոբի սենյակը» և «Դեպի փարոսը» մոդերնիստական երկու լավագույն վեպերում, որոնք ստեղծվել են ինքնակենսագրական հիմքի վրա, տան տարածային խորհրդանիշը վերաճում է աշխարհի արտաքին թաղանթի: Այստեղ մասնավորը համադրվում է ունիվերսալի հետ, պահը՝ հավերժության: Այս երկու վեպերի գեղարվեստական կառուցվածքի մեծ վարպետությունը թույլ է տալիս ասել, որ դրանք հեղինակի մոդերնիստական պոետիկայի «ոսկե միջուկն են»: Դա է գալիս ապացուցելու նաև այն փաստը, որ այս երկու վեպերում Վ. Վուլֆին հաջողվեց հաղթահարել խոսքի պայմանականությունը և մոտենալ վերխոսքային «մաքուր իրականությանը», կեցության նախահիմքերին: Սա է հեղինակի վիպական պոետիկայի, ինչպես նաև նրա մոդերնիստական որոնումների հիմնական նպատակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Abel E. Virginia Woolf and the Fictions of Psychoanalysis. Chicago: University of Chicago Press, 1989.
2. Auerbach E. Mimesis: the Representation of Reality in Western Literature. Princeton: Princeton University Press, 1953.
3. Daiches D. The Novel and the Modern World. Chicago: University of Chicago Press, 1967.
4. Guiguet J. Virginia Woolf and her works. London: Hogarth Press, 1965.
5. Lee H. The Novels of V. Woolf. London: Methuen, 1977.
6. Jean L.O. Virginia Woolf. Sources of madness and art. Berkeley: University of California Press, 1977.
7. Marcus J, Art and Anger: Reading like a Woman. Columbus: Ohio State University Press, 1988.
8. Samuelson R. Virginia Woolf, Orlando and the Feminist Spirit // *The Western Humanities Review*, XV, 1960.
9. Woolf V. The New Biography // Woolf V. The essays of V. Woolf. Vol. IV. London: Hogarth Press, 1989.
10. Бахтин М.М. Эпос и роман. СПб., 2000.
11. Лотман Ю.М. Структура художественного текста // Лотман Ю.М. Об искусстве. СПб., 1998.

А. ИСРАЕЛЯН – Модернистские черты поэтики романов *Вирджинии Вульф*. – В статье исследуются особенности модернистских романов английской писательницы Вирджинии Вульф. Основной акцент делается на романы «Комната Джейкоба» и «На маяк», каждый из которых представляет отдельный этап в творчестве автора. Однако в идейном плане в этих произведениях сохранились общие закономерности, дающие возможность аналитически проследить динамику развития их поэтики. При анализе поэтики романов В. Вульф неизбежно обращение к литературному направлению «поток

сознания» (stream of consciousness), которое занимает центральное место в литературе модернизма. Элементы этого направления очевидны и в исследуемых романах: отсутствие причинно-следственной связи, «расчлененность» сюжетной линии, «размытость» границ категорий времени и пространства. Целью писательницы является сопоставление частного с универсальным, мгновения – с вечностью, преодоление языковых условностей, так как именно это приближает к познанию основ бытия.

Ключевые слова: структурная поэтика, моделирование, формирование текстовых элементов, модернистский экспериментальный роман, поток сознания

H. ISRAYELYAN – *Modernist Features of V. Woolf's Novels.* – The paper studies the features of modernist novels by English writer Virginia Woolf. The focus is on the novels “To the lighthouse” and “Jacob's Room”, each of which represents a different stage in the creation of the author. However, conceptually general rules have survived enabling analytically trace the dynamics of the poetics. When analyzing the poetics of Woolf's novels it is inevitable to appeal to the literary movement “stream of consciousness” which occupies a central place in the literature of modernism. Elements of this trend are obvious in the studied novels; the absence of casual relationship, “dissection” of the storyline, “blurring” of boundaries of categories of time and space. The purpose of the writer is to compare the private with the universal, the moment with the eternity, overcome linguistic conventions as just it may bring to the knowledge of basics of entity.

Key words: structural poetics, modeling, formation of text elements, modernist experimental novel, stream of consciousness